ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 11-ի թիվ 25-Ն հրամանը, ՀՀ Շիրակի մարզի Աշոցքի տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համակարգող խորհրդին անդամագրվելու համար Աշոցքի տարածաշրջանի սոցիալական համագործակցության համաձայնագրին միացած սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք մինչև ս/թ մարտի 10-ը ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Աշոցքի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (գ. Աշոցք, Հրապարակ 1) ներկայացնեն մեկական ներկայացուցչի թեկնածություն:

Հայտագրման համար ներկայացվող նվազագույն պահանջներն են՝

- սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փորձ.
- սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի իրականացում:

ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի
Աշոցքի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն